ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՍՊ-ՄԱ- 99-2018-1

Ք. Երևան «27» հունվարի 2018 թ.

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վահե Էլոյանի, որը գործում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Ա/Ձ «Ռուզաննա Մինասյանը», այսուհետ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված տնտեսական ապրանքները (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են հինգ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով,

ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել հինգ օրից ավելի,

2.1.8 Հնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 895180 (ութ հարյուր իննսունհինգ հազար մեկ հարյուր ութսուն) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը

էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ

պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 18 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա

ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ք. Երևան, Աբովյան 9 Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011018505 ՀՎՀՀ 02586282	Ա/Ձ «Ռուզաննա Մինասյան» ք. Երևան, Բաշինջաղյան 103/1 «Արարատբանկ» ԲԲԸ Հ/Հ 1510043534060100 ՀՎՀՀ 27955992
Աշխատակազմի ղեկավար՝ ----------Վ. Էլոյան /ստորագրություն/ Կ.Տ	Տնօրեն՝ ----------Ռ.Մինասյան /ստորագրություն/ Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
20 թ. կնքված
ՍՊ-ՄԱ-9 ընդհանուր կայմանագրի

«27» 02 2018 թ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի										մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
1.	**14411100/1**	Քարաղ	Ավանի աղի կոմբինատ ՓԲԸ,ՀՀ	Աղ տեխնիկական՝ նախատեսված ձյան մաքրման աշխատանքների համար	կգ	90	1980	22	Ք. Երևան, Աբովյան 9	22	I-II եռամյակ
2.	**19641000/1**	Պոլիէթիլենային պարկ, աղբի համար	Արմենիա պլաստ ՍՊԸ,ՀՀ	Աղբի պոլիէթիլենային տոպրակներ, սև կամ գունավոր, աղրը հավաքելու համար՝ ըստ ԳՕՍ 10354-82 (տուփում 10 հատ 160 լիտր)	տուփ	1200	6000	5		5	
3.	**19641000/2**	Պոլիէթիլենային պարկ, աղբի համար	Արմենիա պլաստ ՍՊԸ,ՀՀ	Աղբի պոլիէթիլենային տոպրակներ, սև կամ գունավոր, աղրը հավաքելու համար՝ ըստ ԳՕՍ 10354-82 (տուփում 30 հատ 35 լիտր)	տուփ	400	2000	5		5	
4.	**31321300/1**	Էլեկտրական լարեր	ԻՆ-ՎԻ ՍՊԸ, ՀՀ	Մալուխ, պղնձե ջղերով, նախատեսված ներքին մոնտաժման համար, 2,5մմ² մոնտաժային լար տարբեր քանակի մետաղալարե պղնձե կամ անագապատ պղնձե ջղերով, պոլիվինիլքլորիդային մեկուսացմամբ կամ անագապատ պղնձե ջղերով պոլիէթիլենային մեկուսացմամբ, տարբեր հատվացքներով	մետր	240	12000	50		50	
5.	**31441000/1**	Մարտկոց AAA տեսակի	Energizer co LTD, Չինաստան	Նախատեսված տարբեր տեսակի էլեկտրական սարքավորումների համար, 1.5վ, AAA ալկալիական, առնվազն մեկ տարվա պիտանելիության ժամկետով	հատ	300	3600	12		12	
6.	**31442000/1**	Մարտկոց AA տեսակի	Energizer co LTD, Չինաստան	Նախատեսված տարբեր տեսակի էլեկտրական սարքավորումների համար, 1.5վ, AA ալկալիական, առնվազն մեկ տարվա պիտանելիության ժամկետով	հատ	300	3600	12		12	
7.	**31531100/1**	Էլեկտրական	Վարտոն ԲԲԸ, ՌԴ	Էլեկտրական լեդ լամպ 170-265 Վ լարման, LE A60 15 Վտ հզորությամբ, կոթառը E 27/27 տիպի,	հատ	2200	136400	62		62	

		լամպեր		4000 Կելվին, 2 տարի երաշխիքով՝ 40 հատ Էլեկտրական լեդ լամպ 170-265 Վ լարման, LE SV 8 Վտ հզորությամբ, կոթառը E 14/14 տիպի, 3000 Կելվին, 2 տարի երաշխիքով՝ 12 հատ Էլեկտրական լեդ լամպ 170-265 Վ լարման, LE CK1 6 Վտ հզորությամբ, կոթառը E 27/27 տիպի, 4000 Կելվին, 2 տարի երաշխիքով՝ 10 հատ							
8.	**31531300/1**	Տնտեսող լամպեր	Վարտոն ԲԲԸ, ՌԴ	Էլեկտրական լեդ լամպ 170-265 Վ լարման, 15 Վտ հզորությամբ, կոթառը E 27/27 տիպի, 3000 Կելվին, բարձրությունը 140 մմ, տրամագիծը 8 սմ, 2 տարի երաշխիքով՝ 80 հատ Էլեկտրական լեդ լամպ 170-265 Վ լարման, GX տիպի 6 Վտ հզորությամբ, տրամագիծը 75 մմ, 6000 Կելվին, 2 տարի երաշխիքով՝ 3 հատ Էլեկտրական լեդ լամպ 170-265 Վ լարման, G4 տիպի 5 Վտ հզորությամբ, 2 տարի երաշխիքով՝ 11 հատ	հատ	1600	150400	94		94	
9.	**31531300/2**	Տնտեսող լամպեր	ADNEXT co.LTD Չինաստան	Էլեկտրական լեդ լամպ 170-265 Վ լարման, 15 Վտ հզորությամբ, կոթառը E 27/27 տիպի, 3000 Կելվին, բարձրությունը 140 մմ, տրամագիծը 8 սմ, 2 տարի երաշխիքով	հատ	2140	214000	100		100	
10.	**31531500/1**	Ցերեկային լամպ՝ 60 սմ	Dupro co.LTD , Չինաստան	Խողովակաձև լյումինեսցենտային լամպ ուղիղ, օղակաձև կամ U-ձև G-13 տիպի լամպակոթով, 20, 25 և 40 Վտ անվանական հզորությամբ, 50 Հց հաճախականության, 60 սմ երկարությամբ, ԳՕՍՏ 6825-91: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»:	հատ	1600	8000	5		5	
11.	**31681100/1**	Էլեկտրական պարագաներ	Makel LTD, Թուրքիա	Վարդակ-անջատիչ, մեկ ստեղնով՝ նախատեսված էլեկտրական լամպը միացնելու և անջատելու համար - 3 հատ Վարդակ-անջատիչ, երկու ստեղնով՝ նախատեսված էլեկտրական լամպը միացնելու և անջատելու համար - 3 հատ	հատ	750	4500	6		6	
12.	**31681600/1**	Էլեկտրական ապահովիչ՝	Legrand LTD, Թուրքիա	Հալուն ապահովիչ՝ 40 Ա անվանական հոսանքով, լարումը՝ 220 Վ: Նախատեսված է գերբեռնման և կարճ միացումների ժամանակ ուժային գծերի	հատ	1300	6500	5		5	

		միաֆազ, 40Ա		պաշտպանության համար: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի:							
13.	**31681900/1**	Էլեկտրական ակոսիչ (դռել)	Makita co., LTD, Չինաստան	Էլեկտրական գործիք շինարարության, հարդարման, ատաղձագործության, փականագործության և այլ աշխատանքների ընթացքում տարբեր նյութերի վրա հորատման անցքեր անելու համար, հարվածային, հզորությունը՝ 780 W, պտույտների քանակը՝ 0-3000, պատրոնը՝ 13, փոխանցումների քանակը՝ 2, քաշը՝ 2 կգ, 5 հատ պահեստային գայլիկոններով	հատ	25000	25000	1		1	
14.	**31684400/1**	Վարդակ	Makel LTD, Թուրքիա	Վարդակ երկբևեռանի, մեկ տեղանոց պլաստմասսայե UL-94V, 1 port RJ11 բնիկով, մեկուսիչի էլեկտրական դիմադրությունը՝ R 1000 MOм, աշխատանքային ջերմաստիճանը՝ մինուս 30 °C-ից մինչև +80 °C, սպիտակ կամ կաթնագույն: Անվտանգությունն՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»:	հատ	650	3250	5		5	
15.	**31685000/1**	Էլեկտրական երկարացման լար	Makel LTD, Թուրքիա	Երկարացման լար, ֆիլտրով, հինգ տեղանոց, 4-5 մետր: Անվտանգությունն՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»:	հատ	2000	10000	5		5	
16.	**33761000/1**	Զուգարանի թուղթ, ռուլոնով	Սկարլետ ՍՊԸ , ՀՀ	Երկշերտ կամ եռաշերտ, 9,8սմX12,5սմ, 150 թերթիկ, երկ. 18,75մ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից, թույլատրված սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի»	հատ	100	60000	600		600	
17.	**39522250/1**	Փոշու հավաքման	Amigo co.,LTD	Լաթեր տրիկոտաժային կամ հյուսվածքային բամբակյա հումքից	հատ	100	2200	22		22	

		կտորներ	Չինաստան							
18.	**39522330/1**	Մաքրող կտորներ	Amigo co.,LTD Չինաստան	Լաթեր (45 x 80) սմ, բամբակյա գործվածքից՝ հատակը լվանալու համար	հատ	480	4800	10		10
19.	**39542100/1**	Կտորտանք	Amigo co.,LTD Չինաստան	Ձայնամեկուսիչ քառանկյուն, ինքնակպչուն քեչա՝ սեղանի և աթոռի ոտքերի տակ ամրացնելու համար նախատեսված	տուփ	200	3000	15		15
20.	**39811100/1**	Օդի թարմացուցիչ	Glade LTD	Օդի հոտավետ թարմացուցիչ, աերոզոլային փաթեթվածքով կամ վակումային բալոնիկով	հատ	350	1750	5		5
21.	**39831100/1**	Լվացող նյութեր (ապակի լվանալու հեղուկ)	Էկոֆորմ ՍՊԸ, <<	Ապակի լվանալու հեղուկ, չափածրարված 0,5 լ-զանգվածով: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ << կառավարության 2004 թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի»	հատ	350	3500	10		10
22.	**39831240/1**	Մաքրող նյութեր (լվացող, մաքրող փոշի)	Էկոֆորմ ՍՊԸ, <<	Լվացող և մաքրող փոշի՝ սպիտակի կամ կանաչի, կապույտի կամ այլ գույների բաց երանգներով, օգտագործված հոտավորիչի հոտով, 1%-անոց ջրային լուծույթի pH-ը՝ 2-7, ջրում չլուծվող մնացորդի զանգվածային մասը՝ 70%-ից ոչ պակաս, խոնավությունը՝ 2%-ից ոչ ավելի, մաքրող հատկությունը՝ 85%-ից ոչ պակաս, պետք է լինեն ոչ թունավոր և հրակայուն, փաթեթավորված՝ 200 ից մինչև 500 գ կշռաբաժիններով՝ պոլիմերային կամ այլ տարաներում, սալահատակ մաքրելու նյութ, անվտանգությունը, մակնշումը և փաթեթա-վորումը՝ ըստ << կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի»	հատ	230	2300	10		10
23.	**39831240/2**	Մաքրող նյութեր (սպիտակեցնող հեղուկ՝ ժավել)	Էկոֆորմ ՍՊԸ, <<	Սպիտակեցնող և ախտահանող հատկություններով հեղուկ, ակտիվ քլորի պարունակությունը 90, 120 կամ 150 կգ/մ3	լիտր	100	2000	20		20
24.	**39831242/1**	Լվացքի փոշի՝ ձեռքով լվանալու համար	Էկոֆորմ ՍՊԸ, <<	Սպիտակ, բաց դեղնավուն կամ գունավորած հատիկավոր փոշի: Փոշու զանգվածային մասը ոչ ավել 5 %, pH-ը՝ 7,5-11,5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավելի 22 %, փրփրագոյացման ունակությունը (ցածր փրփրագոյացնող միջոցների համար) ոչ ավել 200 մմ, փրփուրի կայունությունը ոչ ավելի 0,3	կգ	580	2900	5		5

				միավոր, լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, սպիտակեցնող ունակությունը (քիմիական սպիտակեցնող նյութեր պարունակող միջոցների համար) ոչ պակաս 80 %: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի» համաձայն							
25.	**39831245/1**	Հեղուկ օճառ	Էկոֆորմ ՍՊԸ, ՀՀ	Մակերևութաակտիվ նյութերից և տարբեր կենսաբանական ակտիվ նյութերի լուսա-մզվածքներից պատրաստված օճառ, հոտավետ, ջրածնային իոնների խտությունը՝ 7-10 pH, ջրում չլուծվող խառնուկների պարունակությունը ոչ ավել 15%-ից, չօճառացվող օրգանական նյութերի և ճարպերի պարունակությունը՝ ոչ ավել 0,5 %-ից, փրփրագոյացնող հատկությունը՝ ոչ պակաս 300 սմ3-ից, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող ու մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի», եվրոպական արտադրության տարայով	լիտր	240	73200	305		305	
26.	**39831273/1**	Հատակի մաքրման նյութ (սալահատակը մաքրող միջոց)	Էկոֆորմ ՍՊԸ, ՀՀ	Մաքրող, լվացող և ախտահանող մածուկ: Չշերտավորվող մածիկանման զանգված դեղնականաչավուն երանգի: Օգտագործված հոտավորիչի հոտով: Քլորի թույլ հոտով: Ջրում չլուծվող մնացորդի զանգվածային մասը՝ 45 %-ից ոչ պակաս, ակտիվ քլորի զանգվածային մասը՝ 2,5 %-ից ոչ պակաս: Փաթեթավորված պոլիմերային տարայում 0,5 կգ զանգվածով, ՀՍ 275-2007: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևույթաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի»	հատ	960	4800	5		5	
27.	**39831273/2**	Հատակի մաքրման նյութ (լամինատ	Էկոֆորմ ՍՊԸ, ՀՀ	Լամինատե հատակի մաքրման համար նախատեսված նյութ՝ չափածրարված 500 մլ տարողությամբ պոլիմերային տարաների մեջ	հատ	1300	6500	5		5	

		մաքրող միջոց)								
28.	**39831276/1**	Զուգարան ների մաքրման նյութեր	Էկոֆորմ ՍՊԸ, ՀՀ	Մաքրող, լվացող և ախտահանող մածուկ: Չշերտավորվող մածիկանման զանգված դեղնականաչավուն նրանգի: Օգտագործված հոտավորիչի հոտով: Քլորի թույլ հոտով: Ջրում չլուծվող մնացորդի զանգվածային մասը՝ 45 %-ից ոչ պակաս, ակտիվ քլորի զանգվածային մասը՝ 2,5 %-ից ոչ պակաս: Փաթեթավորված պոլիմերային տարայում 0,5 լ. զանգվածով, ՀՍՏ 275-2007: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004 թ. դեկտեմբերի 16-ի № 1795-Ն որոշմամբ հաստատված «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևույթաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի»	հատ	640	6400	10		10
29.	**39836000/1**	Ավել, սովորական	Zambak LTD, Թուրքիա	Սենյակի հատակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում՝ 350-500 գ, երկարությունը՝ 85-90 սմ. ավլող մասի լայնքը՝ 35-40 սմ	հատ	750	3750	5		5
30.	**42121190/1**	Ջրի պոմպեր	Marquis co.LTD, Չինաստան	Բազմաստիճան ջրի պոմպ. ջրաքանակը առավելագույնը (l/րոպե)՝ 250, ճնշումը առավելագույնը (մետր)՝ 45, հզորություն՝ 2.2 kWh	հատ	45000	45000	1		1
31.	**43611170/1**	Միացման հանգույցներ (դռան ծխնի)	CAC-cilit co.LTD, Չինաստան	Երկու հատվածային հանգույց՝ դռան ծխնի 100 մմ., սպիտակ, տեղադրվում է անմիջապես պրոֆիլային ձողերով	հատ	400	8000	20		20
32.	**44141110/1**	Խողովակներ	Venus co.,LTD , Չինաստան	Ծորակի ճկուն խողովակ 90 սմ, կցամասերը լատունից, վրայի գործվածքը խիտ ներժ	հատ	1000	5000	5		5
33.	**44141110/2**	Խողովակներ	Venus co.,LTD , Չինաստան	Ճկախողովակ, գոֆռե բազմաֆունկցիոնալ, պոլիվինիքլորիդե, 650մմ, 1 մետր	հատ	900	4500	5		5
34.	**44192600/1**	Մեխ	ՌԴ	Շինարարական, մետաղական մեխ, 20 մմ-ից 60 մմ	կգ	1000	1000	1		1
35.	**44411110/1**	Ջրի ծորակ, փական	Venus co.,LTD , Չինաստան	Ջրի ծորակի պտուտակ (վինտիլ), բարձր որակի լատունից կամ ներժից, 1/2 դյույմ	հատ	1700	8500	5		5
36.	**44511370/1**	Գործիքների հավաքածուներ	Finder co.LTD, Չինաստան	Գործիքների հավաքածու՝ ներառող պտուտակահաններ տարբեր չափերի և ձևերի, պտուտակաբանալի, վեցանիստ բանալի, հարթաշուրթ, աքցան, մուրճ, ձեռքի սղոց մետաղի կամ այլ նյութերի սղոցման համար և զոդման գործիք	հատ	21500	21500	1		1
37.	**44521120/1**	Դռան	CAC-cilit co.LTD,	Մետաղապլաստե դռների համար նախատեսված մեխանիզմ մետաղից (կողպեք), առանց բռնակի	հատ	2350	11750	5		5

		փականներ	Չինաստան								
38.	**44521200/1**	Կողպեքի մասեր	CAC-cilit co.LTD, Չինաստան	Ալյումինե դռան բռնակ	հատ	2300	11500	5		5	
39.	**44521200/2**	Կողպեքի մասեր	Extra co.LTD, Չինաստան	Կողպեքի միջուկ՝ երկարությունը 7 սմ:	հատ	2200	6600	3		3	
40.	**44521200/3**	Կողպեքի մասեր	Extra co.LTD, Չինաստան	Կողպեքի միջուկ՝ երկարությունը 9 սմ:	հատ	2500	7500	3		3	

** մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

ԳՆՈՐԴ

Հայաստանի Հանրապետության սպորտի և
երիտասարդության հարցերի
նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011018505
ՀՎՀՀ 02586282

Աշխատակազմի ղեկավար՝

---------- Վ. Էլոյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Ա/Ձ «Ռուզաննա Մինասյան»
ք. Երևան, Բաշինջաղյան 103/1
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510043534060100
ՀՎՀՀ 27955992

Տնօրեն՝

---------- Ռ. Մինասյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
2018 թ. փետրվարի 27-ի կնքված
N ՄՈ-ՄՍ -99-[illegible] պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Անող. Հազ. ՀՀ դրամ

Ապրանքի															
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ընդամենը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
1	2	3	4=(5;16)	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	14411100/1	Քարաղ	1.98		1.98	1.98	1.98	1.98	1.98	1.98	1.98	1.98	1.98	1.98	1.98
2	19641000/1	Պոլիէթիլենային պարկ, աղբի համար	6.00		6.00	6.00	6.00	6.00	6.00	6.00	6.00	6.00	6.00	6.00	6.00
3	19641000/2	Պոլիէթիլենային պարկ, աղբի համար	2.00		2.00	2.00	2.00	2.00	2.00	2.00	2.00	2.00	2.00	2.00	2.00
4	31321300/1	Էլեկտրական լարեր	12.00		0.00	0.00	12.00	12.00	12.00	12.00	12.00	12.00	12.00	12.00	12.00
5	31441000/1	Մարտկոց AAA տեսակի	3.60		3.60	3.60	3.60	3.60	3.60	3.60	3.60	3.60	3.60	3.60	3.60
6	31442000/1	Մարտկոց AA տեսակի	3.60		3.60	3.60	3.60	3.60	3.60	3.60	3.60	3.60	3.60	3.60	3.60
7	31531100/1	Էլեկտրական լամպեր	136.40		0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	0.00	136.40	136.40	136.40
8	31531300/1	Տնտեսող լամպեր	150.40		0.00	0.00	0.00	0.00	0.00	150.40	150.40	150.40	150.40	150.40	150.40
9	31531300/2	Տնտեսող լամպեր	214.00		0.00	0.00	0.00	0.00	0.00	50.00	50.00	50.00	214.00	214.00	214.00
10	31531500/1	Ցերեկային լամպ՝ 60 սմ	8.00		0.00	0.00	8.00	8.00	8.00	8.00	8.00	8.00	8.00	8.00	8.00
11	31681100/1	Էլեկտրական պարագաներ	4.50		4.50	4.50	4.50	4.50	4.50	4.50	4.50	4.50	4.50	4.50	4.50
12	31681600/1	Էլեկտրական ապահովիչ՝ միաֆազ, 40Ա	6.50		6.50	6.50	6.50	6.50	6.50	6.50	6.50	6.50	6.50	6.50	6.50
13	31681900/1	Էլեկտրական ակոսիչ (դոբել)	25.00		0.00	0.00	25.00	25.00	25.00	25.00	25.00	25.00	25.00	25.00	25.00
14	31684400/1	Վարդակ	3.25		3.25	3.25	3.25	3.25	3.25	3.25	3.25	3.25	3.25	3.25	3.25

15	31685000/1	Էլեկտրական երկարացման լար	10.00		10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00	10.00
16	33761000/1	Զուգարանի թուղթ, ռուլոնով	60.00		0.00	0.00	60.00	60.00	60.00	60.00	60.00	60.00	60.00	60.00	60.00
17	39522250/1	Փոշու հավաքման կտորներ	2.20		2.20	2.20	2.20	2.20	2.20	2.20	2.20	2.20	2.20	2.20	2.20
18	39522330/1	Մաքրող կտորներ	4.80		4.80	4.80	4.80	4.80	4.80	4.80	4.80	4.80	4.80	4.80	4.80
19	39542100/1	Կտորտանք	3.00		3.00	3.00	3.00	3.00	3.00	3.00	3.00	3.00	3.00	3.00	3.00
20	39811100/1	Օդի թարմացուցիչ	1.75		1.75	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.75	1.75
21	39831100/1	Լվացող նյութեր(ապակի մաքրման հեղուկ)	3.50		3.50	3.50	3.50	3.50	3.50	3.50	3.50	3.50	3.50	3.50	3.50
22	39831240/1	Մաքրող նյութեր (լվացող, մաքրող	2.30		2.30	2.30	2.30	2.30	2.30	2.30	2.30	2.30	2.30	2.30	2.30
23	39831240/2	Մաքրող նյութեր (ախտահանող հեղուկ՝ ժավել)	2.00		2.00	2.00	2.00	2.00	2.00	2.00	2.00	2.00	2.00	2.00	2.00
24	39831242/1	Լվացքի փոշի՝ ձեռքով լվանալու համար	2.90		2.90	2.90	2.90	2.90	2.90	2.90	2.90	2.90	2.90	2.90	2.90
25	39831245/1	Հեղուկ օճառ	73.20		0.00	0.00	0.00	0.00	0.00	73.20	73.20	73.20	73.20	73.20	73.20
26	39831273/1	Հատակի մաքրման նյութ(սալահատակը մաքրող միջոց)	4.80		4.80	4.80	4.80	4.80	4.80	4.80	4.80	4.80	4.80	4.80	4.80
27	39831273/2	Հատակի մաքրման նյութ (լամինատ մաքրող միջոց)	6.50		6.50	6.50	6.50	6.50	6.50	6.50	6.50	6.50	6.50	6.50	6.50
28	39831276/1	Զուգարան ների մաքրման նյութեր	6.40		6.40	6.40	6.40	6.40	6.40	6.40	6.40	6.40	6.40	6.40	6.40
29	39836000/1	Ավել, սովորական	3.75		3.75	3.75	3.75	3.75	3.75	3.75	3.75	3.75	3.75	3.75	3.75
30	42121190/1	Ջրի պոմպեր	45.00		0.00	0.00	45.00	45.00	45.00	45.00	45.00	45.00	45.00	45.00	45.00
31	43611170/1	Միացման հանգույցներ (դռան	8.00		0.00	0.00	8.00	8.00	8.00	8.00	8.00	8.00	8.00	8.00	8.00
32	44141110/1	Խողովակներ	5.00		5.00	5.00	5.00	5.00	5.00	5.00	5.00	5.00	5.00	5.00	5.00
33	44141110/2	Խողովակներ	4.50		4.50	4.50	4.50	4.50	4.50	4.50	4.50	4.50	4.50	4.50	4.50
34	44192600/1	Մեխ	1.00		1.00	1.00	1.00	1.00	1.00	1.00	1.00	1.00	1.00	1.00	1.00
35	44411110/1	Ջրի ծորակ, փական	8.50		0.00	0.00	8.50	8.50	8.50	8.50	8.50	8.50	8.50	8.50	8.50
36	44511370/1	Գործիքների հավաքածուներ	21.50		0.00	0.00	21.50	21.50	21.50	21.50	21.50	21.50	21.50	21.50	21.50
37	44521120/1	Դռան փականներ	11.75		0.00	0.00	11.75	11.75	11.75	11.75	11.75	11.75	11.75	11.75	11.75

38	**44521200/1**	Կողպեքի մասեր	11.50		0.00	0.00	11.50	11.50	11.50	11.50	11.50	11.50	11.50	11.50	11.50
39	**44521200/2**	Կողպեքի մասեր	6.60		0.00	0.00	6.60	6.60	6.60	6.60	6.60	6.60	6.60	6.60	6.60
40	**44521200/3**	Կողպեքի մասեր	7.50		0.00	0.00	7.50	7.50	7.50	7.50	7.50	7.50	7.50	7.50	7.50
Ընդամենը			895.18		95.83	95.83	321.18	321.18	321.18	594.78	594.78	594.78	895.18	895.18	895.18

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

ք. Երևան, Աբովյան 9

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

Հ/Հ 900011018505

ՀՎՀՀ 02586282

Աշխատակազմի ղեկավար՝

Վ. Էլոյան

(ստորագրություն)

Կ. Տ.

ԿԱՏԱՐՈՂ

Ա/Ձ «Ռուզաննա Մինասյան»

ք. Երևան, Բաշինջաղյան 103/1

«Արարատբանկ» ԲԲԸ

Հ/Հ 1510043534060100

ՀՎՀՀ 27955992

Տնօրեն՝

Ռ. Մինասյան

(ստորագրություն)

Կ. Տ.

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն